Հայաստանի կենսաբ. հանդես, 4 (73), 2021

ԱՆՎԱՆԻ ԳԻՏՆԱԿԱՆ ՈՒ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՍԻՐԵԼԻՆ
(պրոֆեսոր Ֆ.Դ. ԴԱՆԻԵԼՅԱՆԻ հիշատակին)

Ս.թ. օգոստոսի 30-ին իր մահկանացուն կնքեց ԵՊՀ կենդանաբանության ամբիոնի նախկին վարիչ, ԵՊՀ կենսաբանության գիտահետազոտական ինստիտուտի կենդանաբանության լաբորատորիայի գիտական ղեկավար, կենս. գիտ. Դոկտոր, պրոֆեսոր Ֆելիքս Դանիելի Դանիելյանը: Նա ծնվել է 1938 թ. Հունվարի 21-ին Երևանում: 1955 թվականին Ֆ.Դ. Դանիելյանը ավարտել է Երևանի թիվ 10 միջնակարգ դպրոցը, իսկ 1962 թվականին՝ Երևանի պետական համալսարանի կենսաբանության ֆակուլտետը: Ուսանողական տարիներին դրսևորվում են կենսաբանության, հատկապես կենդանաբանության, նկատմամբ նրա անսահման սերն ու հետաքրքրությունը, ինչի շնորհիվ դեռևս 3-րդ կուրսից (1960 թվականից) Ֆ.Դ.Դանիելյանը համատեղում է ուսումն աշխատանքի հետ՝ ընդունվելով աշխատանքի ԵՊՀ կենդանաբանության ամբիոնում՝ որպես լաբորանտ:

Դժվարությամբ կպատկերացներ ուսանողն ու երիտասարդ լաբորանտը, որ ընդունել է ճակատագրական որոշում և իր ողջ ապագա գիտակցական կյանքը (շուրջ վեց տասնամյակ) անխախտ կապելու է Երևանի պետական համալսարանի կենսաբանության ֆակուլտետի հետ, նվիրաբերելու է իր ողջ գիտակրթական ակտիվ գործունեությունը իր հարազատ ամբիոնին: Իր 60-ամյա գործունեության ընթացքում Ֆելիքս Դանիելյանն անցել է համալսարաններին բնորոշ միմյանց հաջորդող պաշտոնների երկար ու ձիգ ուղին՝ ավագ լաբորանտ, ասիստենտ, ավագ դասախոս, դոցենտ, պրոֆեսոր, գիտական լաբորատորիայի ղեկավար, ամբիոնի վարիչ՝ դառնալով միջազգային համբավ վայելող հայազգի անվանի կենդանաբան:

Ավարտելով համալսարանը՝ երիտասարդ մասնագետն ընդունվում է ԽՍՀՄ ԳԱ Լենինգրադի կենդանաբանության ինստիտուտի ասպիրանտուրա: Ասպիրանտական գործունեությունը ծավալելով այդ հայտնի գիտական կենտրոնում և անցնելով միջազգային համբավ վայելող, հետագայում՝ ԽՍՀՄ ԳԱ ակադեմիկոս Ի.Ս. Դարևսկու գիտական դպրոցը, նա 1969 թվականին պաշտպանում է թեկնածուական ատենախոսությունը՝ «Հայկական ժայռային մողեսների էկոլոգիաֆաունիստական ուսումնասիրություններ» թեմայով: Հաջողությամբ պաշտպանած ատենախոսական աշխատանքը, հետագայում գիտական սերտ համագործակցությունը ակադեմիկոս Ի.Ս.Դարևսկու և նրա աշակերտների հետ, ուղղորդեցին երիտասարդ գիտնականի ապագա ուսումնասիրությունների շրջանակը դեպի հերպետոլոգիա՝ դարձնելով նրան հանրապետության առաջատար գիտնական-հերպետոլոգը: 1988 թվականին Ֆ.Դ.Դանիելյանը, ի մի բերելով իր գրեթե երկու տասնամյակ իրականացրած հետազոտությունները, արձանագրելով նշանակալից ձեռքբերումներ հատկապես կովկասյան ժայռային մողեսների պարթենոգենետիկ զարգացման ասպարեզում, Կիևում պաշտպանում է դոկտորական ատենախո-

սությունը՝ «Կովկասյան ժայռային մողեսների կուսածնության հիբրիդային առաջացման տեսություն» թեմայով: Ակադեմիկոս Ի.Ս.Դարևսկու և պրոֆեսոր Ֆ.Դ.Դանիելյանի կողմից առաջարկվող այս տեսությունը նոր խոսք էր հերպետոլոգիայում և միջազգային լայն ճանաչում բերեց նրանց, իսկ պրոֆեսոր Ֆ.Դ. Դանիելյանն իրավամբ ընդունվում էր որպես Հայաստանի հերպետոլոգների առաջատար: Միաժամանակ հարկ է նշել, որ նրա գիտական հետաքրքրությունների շրջանակը բավական լայն էր՝ ընդհանուր կենդանաբանություն, էկոլոգիա, կենդանիների պահպանություն, պարթենոգենեզ, պալեոկենդանաբանություն, կենդանաաշխարհագրություն և այլն: Պրոֆեսոր Ֆ.Դ. Դանիելյանը գիտական պատկառելի ժառանգություն է թողել՝ 240-ից ավելի գիտական հոդվածներ և միջազգային գիտաժողովների նյութեր, որոնց զգալի քանակ լույս է տեսել Հայաստանից դուրս, միջազգային վարկանիշ ունեցող պարբերականներում՝ բարձր պահելով մեր երկրի գիտության հեղինակությունը: Բազմավաստակ պրոֆեսորի ղեկավարությամբ և խորհրդատվությամբ պաշտպանվել են 12 թեկնածուական և 2 դոկտորական ատենախոսություններ:

Լինելով փայլուն գիտնական՝ պրոֆեսոր Ֆ.Դ.Դանիելյանը միաժամանակ, գրեթե կես դար /1969-2018թթ./ դասավանդում էր ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետում «Ընդհանուր կենդանաբանություն», «Հերպետոլոգիա», «Կենդանիների էկոլոգիա և պահպանություն», «Կենդանիների համեմատական մորֆոլոգիա», «Մասնագիտության արդի խնդիրներ» և այլ դասընթացներ՝ վայելելով գործընկերների և ուսանողության սերն ու հարգանքը: Նա հատկապես երիտասարդ մասնագետների, ուսանողների սիրելի դասախոսն էր, որոնք պրոֆեսորից ստանում էին ոչ միայն կենդանաբանական, բնապահպանական, էկոլոգիական պատշաճ գիտելիքներ, այլև, թերևս ավելի կարևոր, մարդկայնության, անկեղծության և պարկեշտության լիարժեք դասեր: Օժտված լինելով մեղմ բնավորությամբ, բարյացակամությամբ և շրջապատի նկատմամբ հոգատարությամբ՝ պրոֆեսոր Ֆ.Դ. Դանիելյանը օրինակ է ծառայել ինչպես երիտասարդների, այնպես էլ գործընկերների համար, և պատահական չէ, որ մեծ համբավ և ժողովրդականություն էր վայելում: Զգալի է նաև նրա լուման ուսումնական, կրթական ձեռնարկների հրատարակման գործում. նա համահեղինակ է «Прыткая ящерица» /М., 1976/, «Սողուններ» /Եր., 2007/, «Herpetofauna of Armenia and Nagorno Karabakh» /N.Y., 2011, «Ճանաչի՛ր և պահպանի՛ր կենդանական աշխարհը» /Եր., 2013/, «Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի երկկենցաղները և սողունները» /Եր., 2016/ գրքերի, ինչպես նաև կենսաբանության ամբողջ շարք հանրակրթական դասագրքերի և շտեմարանների:

Երկար և երջանիկ կյանք ապրեց պրոֆեսոր Ֆ.Դ.Դանիելյանը: Նա անվանի գիտնական էր, հրաշալի դասախոս, նվիրված ընկեր, անմիջական բնավորությամբ օժտված անհատականություն, միաժամանակ ընտանիքի հոգատար ամուսին, սիրված հայր ու պապիկ: Համոզված ենք, որ նրա հիշատակը երկար կապրի իր հարազատների, գործընկերների, իրեն ճանաչողների մոտ:

ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի դեկան՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ
Է.Ս.Գևորգյան

ԵՊՀ կենսաբանության գիտահետազոտական ինստիտուտի տնօրեն՝
կենս.գիտ.թեկնածու, դոցենտ՝
Ա.Հ.Եսայան